# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/23»

ք. Երևան «09» մարտի 2023 թ.

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ն, ի դեմս Խորհրդի նախագահ Արա Շիրինյանի, որը գործում է ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարանտ Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սոֆի Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների տեխնիկական ստուգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Ծառայությունները Կատարողի կողմից մատուցվում են միայն Պատվիրատուի կողմից գրավոր կարգով Կատարողին ներկայացված պատվերի (Պատվիրատուի աշխատակազմի ղեկավարի ստորագրությամբ) հիման վրա:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ տուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը չի կարող գերազանցել **990,000.0 (ինը հարյուր իննսուն հազար)** ՀՀ դրամը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է համապատասխան հաշվի և հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

Ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը (ՄԳ) (ներառյալ՝ ըստ առանձին ծառայությունների) և ծառայության մատուցման համար հրավերով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը (ԸԳ), ինչպես նաև հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ) սահմանվում են սույն Պայմանագրի Հավելված 4-ով:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի

Կողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, և վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկըներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Գարանտ Մոթորս» ՍՊԸ

**ք. Երևան, Թբիլիսյան խճ.20**
**Արդշինբանկ ՓԲԸ**

Հ/Հ 24700750928100000
ՀՎՀՀ 01310872

Տնօրեն՝ Սոֆի Հովհաննիսյան

*Հավելված N 1*
*« 09 » մարտի 2023թ. կնքված*
*N «ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/23» ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71631120/2 | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա և BMW 523i մակնիշի ավտոմեքենաների ստուգման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ *(*Ծառայությունների տեսակները սահմանված են սույն պայմանագրի Հավելված 4-ում)* | դրամ | ծառայության գինը չի կարող գերազանցել 990,000.0 դրամ | 1 | ՀՀ, ք. Երևան, (կատարողի համապատասխան գործունեության վայրում) | Պայմանագիրը ուժի մտնելու օրվանից մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 25-ը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Գարանտ Մոթորս» ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան խճ.20
Արդշինբանկ ՓԲԸ

Հ/Հ 2470075092810000
ՀՎՀՀ 01310872

Տնօրեն՝ Սոֆի Հովհաննիսյան

*Հավելված N 2*
*« 09 » մարտի 2023թ. կնքված*
*«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/23» ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ |ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | | | Ծառայության դիմաց վճարումները չեն կարող գերազանցել | | | | | | | | | | |
| 1 | 71631120/2 | ավտոմեքենաների տեխնիկական ստուգման ծառայություններ | 118,800.0 դրամը | 217,800.0 դրամը | 316,800.0 դրամը | 435,600.0 դրամը | 534,600.0 դրամը | 623,700.0 դրամը | 712,800.0 դրամը | 772,200.0 դրամը | 940,500.0 դրամ | 990,000 դրամ | 990,000 դրամ |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Գարանտ Մոթորս» ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան խճ.20
Արդշինբանկ ՓԲԸ

Հ/Հ 2470075092810000
ՀՎՀՀ 01310872

Տնօրեն՝ Սոֆի Հովհաննիսյան

*Հավելված 3*
*« 09 » մարտի 2023թ. կնքված*
*«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/23» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 09 » մարտի 2023թ. կնքված*
*«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/23» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

*Հավելված N 4*
*« 09 » մարտի 2023թ. կնքված*
*«ՀՀԽԱ-ՄԱԾՁԲ-06/23» ծածկագրով պայմանագրի*

## Մատուցվելիք ծառայության տեսակները, ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը (ՄԳ) (ներառյալ՝ ըստ առանձին ծառայությունների), ծառայության մատուցման համար հրավերով սահմանված յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գների հանրագումարը (ՆԳ) և հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության առավելագույն միավորի գինը (Ծ)

Ավտոմեքենաների տեխնիկական ստուգման՝ SU-1(տեխնիկական զննման /դիագնոստիկա/) , SU-2 (վերանորոգման), ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

Ավտոմեքենաների մակնիշները /տեսակները/՝ 4x4 տիպի Շևրոլե-Նիվա 1 հատ, և BMW 523i 1 հատ

SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները՝

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| | **SU-1 ներառվող ծառայությունների անվանում՝** | | |
| 1 | Բռնկման համակարգի ստուգում | 5,400 | 5.400 |
| 2 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | 5,400 | 5.400 |
| 3 | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | 5,400 | 5.400 |
| 4 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 5,400 | 5.400 |
| | **SU-2 ներառվող ծառայությունների անվանում** | | |
| 1 | Շարժիչի հանում և տեղադրում | 54,000 | 81.000 |
| 2 | Շարժիչի վերանորոգում | 90,000 | 135.000 |
| 3 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | 4,500 | 9.000 |
| 4 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | 4,500 | 9.000 |
| 5 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | 22,500 | 45.000 |
| 6 | Շարժիչի հիդրոհրիչների փոխարինում | 10,800 | 21.600 |
| 7 | Վերևի կափարիչի միջադիրի փոխարինում | 9,000 | 16,200 |
| 8 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոփարինում | 22,500 | 54,000 |
| | **Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 9 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | 900 | 900 |
| 10 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | 31,500 | 58,500 |
| 11 | Օդի զտիչի փոխարինում | 900 | 900 |
| 12 | Սրահի զտիչի փոխարինում | 900 | 900 |
| 13 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | 4,500 | 6,300 |
| 14 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | 67,500 | 67,500 |
| 15 | Բենզամղիչի փոխարինում | 10,800 | 14,400 |
| 16 | Վառելիքի զտիչի փոխարինում | 7,200 | 7,200 |

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| | ***Սառեցման և արտածման համակարգ*** | | |
| 17 | Հովհարի փոկի հանում և տեղադրում | 5,400 | 10,800 |
| 18 | Հովհարի հանում և տեղադրում | 10,800 | 19,800 |
| 19 | Ռադիատորի հանում և տեղադրում | 10,800 | 22,500 |
| 20 | Թերմոստատի փոխարինում | 10,800 | 36,000 |
| 21 | Ջրի պոմպի փոխարինում | 5,400 | 22,500 |
| 22 | Ընդարձակող բաքի փոխարինում | 1,350 | 3,150 |
| 23 | Խլարարի հանում և տեղադրում | 10,800 | 18,000 |
| 24 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում | 1,800 | 4,500 |
| | ***Կցորդում, ՓՏ և ԱՓՏ*** | | |
| 25 | Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում | 14,400 | 18,000 |
| 26 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 10,800 | 10,800 |
| 27 | ՓՏ-ի հանում և տեղադրում | 9,000 | 54,000 |
| 28 | ՓՏ-ի վերանորոգում | 36,000 | 150,000 |
| | ***Բաշխիչ փուփ, կարդանային լիսեռ*** | | |
| 29 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | 7,200 | 7,200 |
| 30 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | 4,500 | 4,500 |
| | ***Առջևի և հետևի կամրջակներ*** | | |
| 31 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | 16,200 | 31,500 |
| 32 | Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում | 22,500 | 31,500 |
| 33 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում | 7,200 | 9,000 |
| 34 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | 10,800 | 13,500 |
| | ***Կախոց*** | | |
| 35 | Տրավերսի հանում և տեղադրում | 18,900 | 29,700 |
| 36 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | 3,600 | 4,500 |
| 37 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | 900 | 13,500 |
| 38 | Անվակունդի հանում և տեղադրում | 9,000 | 10,800 |
| 39 | Զսպանակի հանում և տեղադրում | 4,500 | 6,750 |
| 40 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 4,500 | 6,750 |
| 41 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | 5,400 | 6,750 |
| 42 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | 4,500 | 6,750 |
| 43 | Հետևի մետաղաձողի վռանի փոխարինում | 4,500 | 6,750 |
| 44 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 4,500 | 6,750 |
| 45 | Միջին ձգանի հանում և տեղադրում | 4,500 | 6,750 |
| 46 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | 18,000 | - |
| 47 | Վերևի լծակի հանում և տեղադրում | 7,200 | 10,800 |

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| 48 | Վերևի լծակի վռանների փոխարինում | 900 | 3,150 |
| 49 | Գնդե հոդակապերի փոխարինում | 2,700 | 5,400 |
| 50 | Ծայրակաների հանում և տեղադրում | 2,700 | 5,400 |
| 51 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում | 2,700 | 5,400 |
| 52 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | 2,700 | 5,400 |
| 53 | Առջևի կայունարարի կանգնակների փոխարինում | 2,700 | 5,400 |
| 54 | Առջևի կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | 13,500 | 22,500 |
| 55 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | 4,500 | 9,000 |
| 56 | Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում | 4,500 | 9,000 |
| 57 | Անվաբացքի կարագավորում | 9,000 | 9,000 |
| | ***Ղեկային մեխանիզմ*** | | |
| 58 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | 31,500 | 63,000 |
| 59 | Ղեկային կալունի վերանորոգում | 22,500 | 85,500 |
| | ***Արգելակային համակարգ*** | | |
| 60 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | 4,500 | 8,100 |
| 61 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | 4,500 | 8,100 |
| 62 | Աշխատանքային գլանի հանում և տեղադրում | 4,500 | 8,100 |
| 63 | Արգելակային համակարգի օդահանում | 4,500 | 8,100 |
| 64 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | 4,500 | 8,100 |
| 65 | Արգելակային փողրակի փոխարինում | 4,500 | 8,100 |
| 66 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | 4,500 | 8,100 |
| 67 | Հետևի կոճղակների փոխարինում | 4,500 | 8,100 |
| 68 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | 4,500 | 8,100 |
| 69 | Սկավառակի հղկում | 4,500 | 8,100 |
| 70 | Հետևի արգելակային սկավառակի հանում տեղադրում | 4,500 | 8,100 |
| 71 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | 4,500 | 8,100 |
| | ***Էլեկտրասարքավորում*** | | |
| 72 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | 7,200 | 10,800 |
| 73 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | 7,200 | 10,800 |
| 74 | Գեներատորի հանում և տեղադրում | 7,200 | 10,800 |
| 75 | Գեներատորի վերանորոգում | 7,200 | 10,800 |
| 76 | Գեներատորի փոկի փոխարինում | 7,200 | 10,800 |

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| 77 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | 7,200 | 10,800 |
| 78 | Մեկնարկիչի վերանորոգում | 7,200 | 10,800 |
| 79 | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում | 7,200 | 10,800 |
| 80 | Ազդանշանի հանում և տեղադրում | 7,200 | 10,800 |
| 81 | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում | 7,200 | 10,800 |
| 82 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | - | - |
| 83 | Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում | 27,000 | 45,000 |
| 84 | Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում | 13,500 | 31,500 |
| 85 | Էլեկտրական տվիչների փոխարինում | 4,500 | 4,500 |
| 86 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | 900 | 900 |
| 87 | Վառոցքի մոմերի փոխարինում | 2,700 | 4,500 |
| 88 | Վառոցքի կոճի փոխարինում | 900 | 1,800 |
| 89 | Լամպի փոխարինում | 900 | 1,800 |
| | ***Այլ ծառայություններ*** | | |
| 90 | Անվադողի վերանորոգում | 1,800 | 1,800 |
| 91 | Անիվի բալանսավորում | 1,800 | 1,800 |
| 92 | CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար | 1,800 | 1,800 |
| 93 | Խառատային աշխատանքներ 1ժ-ի համար | 1,800 | 1,800 |
| 94 | Փականագործի աշխատանքներ 1ժ-ի համար | 4,500 | 4,500 |
| 95 | Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար | 567 | 567 |
| 96 | Զասլոնկայի հանում, տեղադրում և լվացում | 22,500 | 31,500 |
| 97 | Ձեռքի արգելակի կարգաբերում | 4,500 | 4,500 |
| | **SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները** | | |
| | ***Շարժիչ*** | | |
| 1 | Բարձիկ | 3,600 | 40,500 |
| 2 | Շարժիչի գլխիկի միջադիր | 3,150 | 19,800 |
| 3 | Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ | 6,300 | 121,500 |
| 4 | Շարժիչի բաշխիչ լիսեռ | 19,800 | 130,500 |
| 5 | Շարժիչի փական դուրս մղող | 2,700 | 6,300 |
| 6 | Շարժիչի փական ներս մղող | 2,700 | 6,300 |
| 7 | Շարժիչի փականի խցուկ | 360 | 1,350 |
| 8 | Ծնկաձև լիսեռ | 49,500 | 202,500 |
| 9 | Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի | 1,800 | 10,800 |

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| 10 | Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի | 2,250 | 13,500 |
| 11 | Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ | 4,500 | 22,500 |
| 12 | Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ | 4,500 | 21,600 |
| 13 | Մխոց | 7,200 | 27,000 |
| 14 | Մխոցային օղակներ | 10,800 | 58,500 |
| 15 | Ատամնանիվ | 10,800 | 21,600 |
| 16 | Շղթա | 7,200 | 28,800 |
| 17 | Հիդրոձգան | 9,900 | 38,700 |
| 18 | Հրիչ | 3,600 | 7,200 |
| 19 | Հիդրոհրիչ | 6,300 | 10,800 |
| 20 | Բաշմակ | 2,700 | 13,500 |
| 21 | Հանգստարար | 2,700 | 16,200 |
| 22 | Թափանիվ | 31,500 | 108,000 |
| 23 | Թափանիվի պսակ | 9,000 | 25,200 |
| 24 | Շարժաթև | 10,800 | 28,800 |
| 25 | Կարտերի միջադիր | 1,350 | 6,300 |
| 26 | Միջադիր | 1,800 | 10,800 |
| | *Ղեկավարման, սնման և յուղման համակարգ* | | |
| 27 | Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր | 3,150 | 3,150 |
| 28 | Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր | 4,050 | 4,050 |
| 29 | Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր | 4,500 | 5,850 |
| 30 | Յուղի զտիչ | 1,800 | 10,800 |
| 31 | Վառոցքի մոմ | 1,800 | 12,150 |
| 32 | Վառոցքի կոճ | 16,200 | 25,200 |
| 33 | Ինժեկտորի ֆորսունկա | 10,800 | 14,400 |
| 34 | Վառելանյութի մղիչ | 19,800 | 46,800 |
| 35 | Վառելանյութի զտիչ | 4,500 | 31,500 |
| 36 | Վառելանյութի փողրակ | 2,700 | 5,400 |
| 37 | Օդի զտիչ | 3,600 | 11,700 |
| 38 | Սրահի զտիչ | 4,500 | 11,700 |
| 39 | Ջերմաստիճանային տվիչ | 2,700 | 9,900 |
| 40 | Յուղի տվիչ | 5,400 | 12,600 |
| 41 | Բաշխիչ լիսեռի տվիչ | 6,300 | 25,200 |
| 42 | Օդի ծախսի տվիչ | 31,500 | 58,500 |
| 43 | Արագաչափի տվիչ | 5,400 | 10,800 |
| 44 | Հովհարի տվիչ | 4,500 | 11,700 |
| 45 | Ջրի տվիչ | 3,600 | 10,800 |

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| 46 | Բենզոբաքի տվիչ | 10,800 | 21,600 |
| 47 | Մարման ընթացքի տվիչ | 6,750 | 19,800 |
| 48 | Ղեկավարման համակարգիչ | 108,000 | 166,500 |
| 49 | Դրոսելային փականի տվիչ | 4,050 | 10,800 |
| 50 | Թթվածնի տվիչ | 19,800 | 32,400 |
| | *Սառեցման և արտածման համակարգ* | - | - |
| 51 | Հովհար | 22,500 | 28,800 |
| 52 | Ռադիատոր | 27,000 | 94,500 |
| 53 | Ընդարձակող բաք | 6,300 | 19,800 |
| 54 | Ռադիատորի փողրակ | 6,300 | 10,800 |
| 55 | Թերմոստատ | 8,100 | 21,600 |
| 56 | Ջրի պոմպ | 9,900 | 31,500 |
| 57 | Սառեցման հեղուկ 1 լիտր | 1,800 | 2,700 |
| 58 | Փոկ | 7,200 | 16,200 |
| 59 | Ծորակ | 3,600 | 18,900 |
| 60 | Խլարարի ներդիր | 1,800 | 5,400 |
| 61 | Խլարարի կախոց | 1,800 | 4,500 |
| 62 | Անուր (Խամուտ) | 450 | 450 |
| 63 | Խլարար | 40,500 | 76,500 |
| 64 | Վառարանի ռադիատոր | 14,400 | 58,500 |
| | ***Կցորդում, ՓՏ և ԱՓՏ*** | - | - |
| 65 | Կցորդման աշխատանքային գլան | 10,800 | 18,900 |
| 66 | Կցորդման գլխավոր գլան | 12,600 | 28,800 |
| 67 | Կցորդման տանող սկավառակ | 18,000 | 31,500 |
| 68 | Կցորդման տարվող սկավառակ | 27,000 | 40,500 |
| 69 | Կցորդման առանցքակալ | 9,000 | 16,200 |

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| 70 | Կցորդման փողրակ | 2,700 | 10,800 |
| 71 | ՓՏ-ի առջևի խցուկ | 900 | 3,600 |
| 72 | ՓՏ-ի հետևի խցուկ | 900 | 4,500 |
| 73 | ՓՏ-ի առանցքակալ | 4,500 | 11,700 |
| 74 | ՓՏ-ի առաջնային լիսեռ | 22,500 | 58,500 |
| 75 | ՓՏ-ի միջանկյալ լիսեռ | 37,800 | 76,500 |
| 76 | ՓՏ-ի եղանիկ | 5,400 | 10,800 |
| 77 | ՓՏ-ի ատամնանիվ | 16,200 | 28,800 |
| 78 | Համաժամիչ | 4,500 | 13,500 |
| 79 | Մուֆտ | 10,800 | 28,800 |
| 80 | ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ | 1,800 | 58,500 |
| 81 | Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր | 3,600 | 4,500 |
| 82 | Հերմետիկ | 3,600 | 3,600 |
| | ***Բաշխիչ փուփ, կարդանային լիսեռ*** | - | - |
| 83 | Կարդանային լիսեռ | 72,000 | 148,500 |
| 84 | Էլաստիկ մուֆտ | 43,200 | 49,500 |
| 85 | Ռեդուկտոր | 130,500 | 166,500 |
| 86 | Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ | 76,500 | 130,500 |
| 87 | Դիֆֆերենցիալ | 58,500 | 81,000 |
| 88 | Դիֆֆերենցիալի սատելլիտ | 13,500 | 27,000 |
| 89 | Տանող ատամնանիվի խցուկ | 1,800 | 4,500 |
| 90 | Տանող ատամնանիվի առանցքակալ | 6,300 | 9,900 |
| 91 | Դիֆֆերենցիալի առանցքակալ | 6,300 | 10,800 |
| 92 | Կիսասռնի | 28,800 | 37,800 |
| 93 | Կիսասռնու առանցքակալ | 4,500 | 16,200 |
| 94 | Կիսասռնու խցուկ | 900 | 3,150 |
| | *Կախոց* | - | - |
| 95 | Տրավերս | 25,200 | 175,500 |
| 96 | Ձախ կամ աջ հոդակապ | 19,800 | 58,500 |
| 97 | Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց | 1,800 | 9,900 |
| 98 | Անվակունդ | 11,700 | 25,200 |
| 99 | Անվակունդի խցուկ | 900 | 3,600 |
| 100 | Անվակունդի ներքին առանցքակալ | 3,600 | 16,200 |
| 101 | Անվակունդի արտաքին առանցքակալ | 3,600 | 16,200 |
| 102 | Զսպանակ | 10,800 | 31,500 |
| 103 | Առջևի հարվածամեղմիչ | 14,400 | 49,500 |
| 104 | Հարվածամեղմիչի վռան | 900 | 3,600 |

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| 105 | Ներքևի լծակ | 16,200 | 49,500 |
| 106 | Ներքևի լծակի վռան | 1,800 | 7,200 |
| 107 | Վերևի լծակ | 16,200 | 36,000 |
| 108 | Վերևի լծակի վռան | 1,800 | 40,500 |
| 109 | Գնդե հոդակապ | 6,300 | 16,200 |
| 110 | Առջևի կայունարարի վռան | 900 | 5,400 |
| 111 | Առջևի կայունարարի կանգնակ | - | 16,200 |
| 112 | Հետևի ցնցամեղմիչ | 14,400 | 40,500 |
| 113 | Հետևի մետաղածող (շտանգա) | 6,300 | 22,500 |
| 114 | Հետևի մետաղածողի (շտանգա) վռան | 540 | 5,400 |
| 115 | Աջ կամ ձախ ձգան | 6,300 | 16,200 |
| 116 | Ծայրակալ | 5,400 | 13,500 |
| 117 | Ձգան մեջտեղի | 9,900 | 19,800 |
| | *Ղեկային մեխանիզմ* | - | - |
| 118 | Ղեկային կալուն | 49,500 | 130,500 |
| 119 | Ճոճանակ | 9,900 | 22,500 |
| 120 | Ճոճանակի վռան | 450 | 5,400 |
| | *Արգելակային համակարգ* | - | - |
| 121 | Գլխ. գլան | 16,200 | 28,800 |
| 122 | Վակուումային ուժեղարար | 31,500 | 58,500 |
| 123 | Բանվ. գլան | 4,500 | 10,800 |
| 124 | Արգելակային փողրակ | 2,700 | 9,900 |
| 125 | Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 5,400 | 22,500 |
| 126 | Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ | 10,800 | 21,600 |
| 127 | Առջևի արգելակային սկավառակ | 13,500 | 40,500 |
| 128 | Ձեռքի արգելակի ճոպան | 6,300 | 25,200 |
| 129 | Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ | 1,800 | 2,700 |
| | *Էլեկտրասարքավորում* | - | - |
| 130 | Գեներատոր | 49,500 | 121,500 |
| 131 | Գեներատորի դիոդային կամրջակ | 6,300 | 16,200 |
| 132 | Գեներատորի ռելե | 3,600 | 14,400 |
| 133 | Գեներատորի փոկ | 7,200 | 16,200 |
| 134 | Գեներատորի առանցքակալ | 1,800 | 7,200 |
| 135 | Ստարտեր | 40,500 | 112,500 |

| Հ/Հ | Ծառայության տեսակներ | Հրավերով սահմանված մատուցվելիք ծառայության յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գինը (Ծ) և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ և ընտրված մասնակցի կողմից առաջարկված առավելագույն միավորի գներ | |
|---|---|---|---|
| | | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա (2006թ.), | BMW 523i (2006թ.) |
| | | Գումարը (ՀՀ դրամ) | Գումարը (ՀՀ դրամ) |
| 136 | Ստարտերի ռելե | 2,700 | 6,300 |
| 137 | Ստարտերի ածուխ | 7,200 | 11,700 |
| 138 | Բենդեքս | 6,300 | 19,800 |
| 139 | Ստարտերի կցորդիչ (ավտոմատ) | 10,800 | 22,500 |
| 140 | Լամպ | 3,600 | 10,800 |
| 141 | Էլեկտրական անջատիչ | 4,500 | 13,500 |
| 142 | Էլեկտրական տվիչ | 5,400 | 16,200 |
| 143 | Հետընթացի տվիչ | 4,950 | 14,850 |
| 144 | Մարտկոց | 43,200 | 63,000 |
| 145 | Բռնկման կողպեք | 17,100 | 58,500 |
| 146 | Էլեկտրալարերի գլխավոր խուրց | 67,500 | 112,500 |
| 147 | Էլեկտրալարերի երկրորդային խուրց | 58,500 | 103,500 |
| 148 | Վառոցքային լարերի խուրց | 7,200 | 28,800 |
| 149 | Ազդանշան | 5,400 | 11,700 |
| 150 | Ապակելվացիչ | 4,500 | 7,200 |
| 151 | Ապակիների լվանալու հեղուկ *1 լիտր* | 1,800 | 1,800 |
| 152 | Ապակելվացիչի շարժիչ | 3,600 | 12,600 |
| 153 | Ապակեմաքրիչ խոզանակ *1 հատ* | 1,800 | 5,400 |
| 154 | Դռների կենտրոնական փական | 2,700 | 22,500 |
| 155 | Ազդանշանային համակարգ | 45,000 | 54,000 |
| 156 | Մագնիտոլա | 31,500 | 58,500 |
| 157 | Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր *գին 1դ/մ վերանորգման համար* | 5,400 | 5,400 |
| 158 | Սրահի գորգերի կոմպլեկտ | 22,500 | 37,800 |
| **Ընդամենը** | | **1,876,590** | **4,143,150** |
| **Ընդամենը գումար** | | | * **6,019,740** |

* ծառայության մատուցման համար հրավերով սահմանված յուրաքանչյուր տեսակի առավելագույն միավոր գների հանրագումարը (ՆԳ) և ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինը (ՄԳ) համընկնում են

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ՀՎՀՀ 01539597

Խորհրդի նախագահ՝ Արա Շիրինյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«Գարանտ Մոթորս» ՍՊԸ

ք. Երևան, Թբիլիսյան խճ.20
Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 2470075092810000
ՀՎՀՀ 01310872

Տնօրեն՝ Սոֆի Հովհաննիսյան